ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ

Օ Ր Ե Ն Ս Գ Ի Ր Ք

(Ընդունված է 2001 թվականի մայիսի 2-ին)

Հոդված 75. Պետության և համայնքների սեփականությանը պատկանող հողերի անհատույց օգտագործման տրամադրման կարգը

1. Պետության և համայնքների սեփականությանը պատկանող հողերն առանց մրցույթի, անհատույց (մշտական) օգտագործման են տրամադրվում՝

1) պետական կամ համայնքային հիմնարկներին ու կազմակերպություններին, ընդ որում պետության սեփականությանը պատկանող հողերն առանց մրցույթի, անհատույց օգտագործման են տրամադրվում «Պետական գույքի կառավարման մասին» «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքներով սահմանված կարգով, սույն օրենսգրքով, պետական գույքի անհատույց օգտագործման տրամադրման մասին Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով.

Համայնքների վարչական սահմաններում գտնվող պետության և համայնքների սեփականությանը պատկանող հողերը մշտական օգտագործման է տրամադրում համայնքի ղեկավարը՝ լիազորված պետական մարմնի գրավոր հայտի հիման վրա՝ հայտն ստանալու պահից 15 աշխատանքային օրվա ընթացքում (բացառությամբ պետական կամ ենթակա պետական մարմիններին, ինչպես նաև կազմակերպություններին ~~հանձնված (ամրացված)~~ վարձակալությամբ տրամադրված պետության սեփականությանը պատկանող հողերի անհատույց օգտագործման դեպքերի, որոնք օգտագործման է տրամադրում պետական գույքի կառավարման լիազոր մարմինը՝ «Պետական գույքի կառավարման մասին» օրենքով սահմանված կարգով, սույն օրենսգրքով, անհատույց օգտագործման տրամադրման մասին Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով, ինչպես նաև սույն օրենսգրքի 77-րդ հոդվածի 1.1-ին կետով սահմանված հողերի օգտագործման դեպքերի):

Հոդված 76. Պետության և համայնքների սեփականությանը պատկանող հողամասերը վարձակալության կամ կառուցապատման իրավունքով տրամադրելը

5. Հողամասն առանց մրցույթի վարձակալության կամ կառուցապատման իրավունքով տրամադրման դեպքերը սահմանում է կառավարությունը Ընդ որում պետության սեփականությանը պատկանող հողերը Հայաստանի Հանրապետության

նախագահի աշխատակազմին, Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմին, Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի աշխատակազմին, պետական կառավարման համակարգի մարմիններին, Համայնքներին, Հայաստանի Հանրապետության մարզպետերի աշխատակազմերին, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի աշխատակազմին, Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատին, Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեին, Հայաստանի Հանրապետության Պետական վերահսկողական ծառայությանը, Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեին, Հայաստանի Հանրապետության անվտանգության խորհրդի աշխատակազմին, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեին, Հայաստանի Հանրապետության դատախազությանը, Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտին, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին, Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովին, Հայաստանի Հանրապետության հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովին, Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմին, Հայաստանի Հանրապետության մրցակցության պաշտպանության հանձնաժողովին և Հայաստանի Հանրապետության կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին վարձակալության են տրամադրվում ուղղակի եղանակով «Պետական գույքի կառավարման մասին» «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքներով սահմանված կարգով, սույն օրենսգրքով, պետական գույքի վարձակալության տրամադրման մասին Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով